ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.02.2018թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼՈՐՈՇՈՒՄ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ՍՑ-ԱՄ-2017/91

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, հիմք ընդունելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2017թ. թիվ ԵԱՔԴ/5009/02/17 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով 28.12.2017թ. տրված թիվ ԵԱՔԴ/5009/02/17 կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի կողմից թիվ 03974541 կատարողական վարույթ հարուցելու մասին 25.01.2018թ. որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.12.2017թ. թիվ 03/26-3/23736-17 գրությամբ «Էդել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2017/91 պաշտոնական ընթացակարգը կասեցնել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**